

Հայոց Յառ. ու Բան, աշխատասիրեց Սահակ վ. Ամատունի, միաբան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ 1912. զինն է 2 ռուբլի:

Այս գործը բառարանն չէ, այլ բառերի ու դարձուածների ժողովածու, բառարանի ձևով դասաւորած: Աշխատասիրողը «Յառաջաբանի» մէջ խօսելով հայ ժողովրդական բարբառներով գրողների մասին, յայտնում է, թէ նրանք «բացել են մեր առաջ ժողովրդի բարբառների ու բառերի մինչ այդ ժամանակ թաքուցեալ գանձը», և ապա աւելացնում է, թէ իր աշխատութեան առաջին նպատակն է եղել «յիշեալ վաստակաւորների երկերից քաղելով ի մի հաւաքել ժողովրդական միտքն ու հոգին, կեանքն ու կենցաղը պատկերացնող բառերը, ոճերը, դարձուածներն ու ասացուածները և իրենց իսկական նշանակութեամբ ու գործածութեան եղանակով ընդհանուրին մատչելի դարձնել» նոյն յառաջաբանում յիշւում են 180-ից աւելի գրքեր, որոնցից օգտուել է հեղինակը:

Դա երկար տարիների և առանձին սիրոյ մի աշխատանք է և ըստ ամենայնի գնահատելի և գովելի և միաժամանակ շատ ցանկալի և կարևոր ամեն մարդի համար, որ հայ գրականութեամբ և լեզուով պարապում է: Ո՞վ է մեզնից, որ յաճախ չի իմացել մի ժողովրդական բառի նշանակութիւնը, այստեղ կը գտնենք ահա շատ ու շատ բառեր ոչ միայն քաջատրուած, այլ և գրքերից, մասամբ և ժողովրդի բերանից օրինակներ այդպիսի բառերի գործածութեան համար: Այս «բառ ու բանը» հարուստ է մանաւանդ ժողովրդի առանին կենցաղին ու պարապմունքին վերաբերեալ բառերով, «որ ոչ մի բառարանի մէջ չենք գտնիլ»: Այդեգործութիւն, հողագործութիւն, խաշնապահութիւն, արհեստներ, անօթներ, գործիքներ և նրանց մասեր, բոյսեր, թռչուններ, հիւանդութիւններ, կերակուրներ ևայլն, ևայլն երևան են գալիս հարուստ բառարանով, և անպայման ապագայում այդ բառերի մի մասը պիտի ընդհանրանայ մեր գրական լեզուի մէջ: Այդ բառերի մեծ մասը յայտնի, ծանօթ արմատներով կազմուած են, բայց կան բաւական թուով և այնպիսիները, որոնք նոր, անծանօթ արմատներից են և քաջատրութեան կարօտ են:

Աշխատասիրողը բնիկ Օշականցի է և ապրում է Վաղարշապատում. շատ բնականօրէն նրան լաւ ծանօթ են եղել Արարատեան բարբառի բառերն ու դարձուածները, որոնք և մեծ տեղ են բռնում այս ժողովածուի մէջ, և նա իր այս գործն սկսել է գրի առնելով Վաղարշապատ, Օշական, Աշտարակ, Փարպի, Եղուարդ, Քանաքեռ,

Նորք գիւղերի և Երևանի Զորագեղ քաղաքամասերի ժողովրդական բառերն ու դարձուածները: Յետագայում աւելացրել է և ուրիշ բարբառների բառեր, «առնելով տեղացի անձերից և քաղելով ժողովրդական գրուածներից, նրանց կից բառարաններից և արձանագրութիւններից», աւելացնենք նաև ձեռագիրներից ու գրաբար մատենագրութիւնից: Մի խօսքով ինչ նոր բառ ու դարձուած, կամ հին յայտնի բառին մի նոր կիրառութիւն որ պատահել է աշխատասիրողին, նա մտցրել է իր ժողովածուի մէջ, նոյն իսկ այնպիսի բառեր, որոնց նշանակութիւնը չի կարողացել ճշտել, — և արդիւնքն եղել է այս հարուստ ժողովածուն:

Մի անգամ ևս առանձին իմն գնահատելով այս կարևոր աշխատանքը, կըմնայ ինձ յայտնել, թէ ինչքան յաջողել է աշխատասիրողին իր կատարած գործը այն ծրագրով, որ նա դնում է իւր Յառաջարանի մէջ:

Այսպիսի աշխատանքները, ինչքան էլ ինքնուրոյն նշանակութիւն ունենան և օգտակար լինին իբրև ձեռքի տակ ունենալու գրքեր, էապէս նախապատրաստական նիւթեր են ապագայում կազմելիք մի ընդարձակ հայերէն բառարանի համար: Այս տեսակէտից է ահա ամենից առաջ հետաքրքրում այս ժողովածուն: Ապագայ ընդարձակ բառարանը մի մարդու և կարճ տարիների գործ չի կարող լինել. դրա վրայ պէտք է աշխատեն շատ մարդիկ: Հարկաւոր է, որ աշխատանքը լինի միաժամանակ և միասին. այլ հարկաւոր է, որ մեր նոր գրականութիւնից հանուին ու բաղատրուեն բոլոր բառերն ու դարձուածները և նրանց համար օրինակներ բերուին. բառարան կազմելու ամենածանր ու դժուար աշխատանքն էլ հենց այս է: Տարբեր անձերի ձեռքով կատարուած այսպիսի գործերից դժուար չի լինիլ այնուհետև ընդարձակ բառարան խմբագրել:

Երբ ևս կարդացի այս «Բառ ու բանի» յառաջարանը և այն բաղմաթիւ գրքերի անունները, որոնցից քաղուած է այս ժողովածուն, մտածեցի, թէ ապագայ բառարանի համար շատ գործ է կատարուած. որովհետև բառարան կազմողն այլ ևս կարիք չի ունենալու բառեր հաւաքելու համար նորից այդ երկերը կարդալու, իսկ Արարատեան բարբառի դարձուածների համար նաև այդ բարբառով գրուած գրքերը թերթելու և դարձուածներ քաղելու, որովհետև «Բառ ու բանի» մէջ կը գտնի այդ բառերն ու դարձուածները: Այսպէս մտածելուս պատճառն այն էր, որ կարծում էի, թէ յիշատակուած գրքերից բոլոր բառերը, իսկ Արարատեան բարբառով գրուածներից նաև բոլոր դարձուածները մէջ բերուած կը լինին: Բայց երբ իսկական աշխատանքը թերթեցի, կասկածելի թուաց ինձ այդ, և որովհետև այս գործը շատ կարևոր էի համարում ապագայ բառարանի համար, փորձեցի ճշտել այդ Արարատեան բարբառի ամենայայտնի

գրքի՝ «Վէրք Հայաստանի» վրայ: Հարկանցի թերթելով Արովեանի վաստակի առաջին տպագրութեան (ձեռքի տակ այդ ունէի) մինչև 77 էջը, դանում եմ, որ կան բաւական թուով բառեր և շատ ու շատ դարձուածներ, որոնք չեն առնուած «Բառ ու բանի» մէջ:

Այսպէս օրինակ՝ ախն ու ռիւր իմ բերնիցս չի պակսում: Ախ ռիւ քաշել մէկի սիրուն: Անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի: Անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գալիս (չկայ և պտուտ գալ ձևով): Մի փոքր մտքիս արեւը երևաց թէ չէ... (=միտքս պարզուեց): Անմեղ քօռփիս ծէնն անկաջումս էր (=յիշում էի, չէի մոռանում): Իմ խեղճ կողակցի ձէնն ա ընկնում ականջս: Որդու անունը անկաջն ընկաւ թէ չէ (=լսել): Բանի նա աչքը չի բաց արել (=զարթնել, զգաստանալ): Աչքը բաց էր արել, էնպէս տեսել (=ծնուած օրից): (Կայ աչք բաց անել՝ իբրեւ մէկի հովանաւորութեան տակ մեծանալ): Աւել քսել (=թեթեւ աւելել): Էնքան արտասունք էր թափել, որ աչքի լիւր թռել էր (=գնացել էր, պակասել էր): Աչքներիդ լիւր կը թռնեմ: Ասուածը մէկ անկաջովը մտաւ. միւսովը դուրս եկաւ (=միտը չպահել): Ամպը գոռալ, ամպի գոռոց (=որոտալ, որոտ): Գոռոց: Աչքը բաց ու խուփ անել: Անց կենալ, անց կացնել: Բաց անել: Ամենի աչքը նրա վրայ էր (=նրան էին ուղղում): Աչքը սառած մնալ (=ապշել): Աչք ու ունքը բաց անել: Մէկ ծիղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես: Աւելի անունը առան բալասի էին դրել: Մեր ղօշաղ տղէքանց աստղը դուրս եկաւ (=բախտը բանեց): Աչքը խփել (=քնել, մեռնել): Աչքերը կուլ են գնացել: Աչքերը ընկել էին խոր, փակուել, կուլ գնացել:—Կուլ գնար. Աչքը քուն գալ: Ետեն ա քեզ դէմ անում, ու աչքը քամակը զցում: Խնդրել եմ Աստուծուց էն դինիում առաջդ դայ.—Մարդ ինչ անի, էն առաջը կը դայ: Աշխարհ գալ (=ծնուել): Անդիր անել, ասել, դիտենալ—(Ղուբանի շատ փայլը անդիր դիտի): Անդղակ: Աշխարհ տեսած մարդ: Աղջիկ քաշել: Արիւն գնալ (քթից, վէրքից կլն): Սուգ ու շիւանն աշխարհս վեր էր կաշել (=բռնել, կայ՝ վեր ունել՝ ուրիշ նշանակութիւններով): Անկաջումն ընկնել (=լսել): Աչքերը սեւանալ. Ամօթով մնալ: Աչքերը ցցած լսել: Առնել մի բանի (=դիպնել)—գլուխը քարին առնի, ոտը գետնին առնի: Աստուածահողի. Աչքիս վրայ. Աչքդ թեքեցիր, ծովի տակին կը բացուի (մի փոքր ննջել): Անմաղ: Անբերան թուր: Բռանց (գրի սին ու սպիտակը բռանց էին ջոկում:—Հինգ մարդ որ վրայ թափուէին, բռանց ձեռը կոխորէին): Բաց թողնել: Գարունքը ուղար բրդըհան է լինում: Հէնց բռնիր թէ մեռել է (=համարիր թէ...): Բերանը աւերել (=անվայել խօսել): Բան տալ, (թէ գութան չունէր բան էր տալի (=փոխ էր տալի, դորձածելու էր տալի ժամանակաւորապէս): Բռնել (=վարձել, մշակ բռնել): Բուրդը քամուն տալ: Բերանը բաց անել մէկի վրայ (=խօսել, բամբասել),—Ով ասես՝ մեզ վրայ պիտի բերանը բաց անի (կայ՝ բերանը բաց անել՝ ուրիշ նշա-

նակութիւններով): Բուրդը դղել, (խեղճ չարակիտնի բուրդն էնպէս էին գզում, որ... Բերել (=ծնել).—Ինչ կըլինէր, որ քո մէրը քեզ նման մէկ հինգն էլ բերէր... Մէրը ազայ, աղջիկ բերեց: Բերանը դալ.— Ինչ բերանները գալիս էր, էն էին քեօնդալանայ ասում, լսում: Բոլորեշուրջ նստել, քէֆ էին անում: Գուժան վարեմ, ցանք անեմ, բահի տամ... Ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցոյց տամ, որ ինձ վրայ զարմանան:

Ձկայ նաև՝ ցոյց տալ: Գլուխս դնաց ձեր ձէնից, էլի: Տէրաէր-ների գլուխն էլ հօ՛ էս օր լաւ տարացած՝ ինչ են մտիկ անում: Գլուխը մահու էր տալիս, որ նրանց խօսքը կատարի: Էլի կարող էր գլուխը պրծացնել: Գլխից դուրս տալ: Գլուխը պտիտ դալ, Գլուխ կապել (կաց չարաաւա դցեմ, գլուխս կապեմ: Կայ՝ գլուխը կապել՝ ուրիշ նշանակութիւններով):

Ինչպէս ընթերցողը կըտեսնի, ես առայ այրբենարանի առաջին երեք տառերը միայն: Այսպիսի պակասներ կարող էինք և միւս տառերից շատ ու շատ ցոյց տալ: Ինչպէս՝ ետ բերել (սիրտը ետ բերել), ետ առնել, ետ քաշուել (ծուխը ետ քաշուեց, քամին ետ առաւ): Ետ մնալ, ետ փախչել, ետ թռչել, ետ դառնալ, ետ սլատմել (տկար լեզուն ինչ կարայ սրտի ամեն մէկ կակիծը, ամեն մէկ եարէն ետ սլատմել): Ետ զնալ: Եփ դալ (սղնճները զլթզլթալով Եփ էին գալիս): Թնդթնդալ (մէկ տեղ վնկվկում են, մէկ տեղ թնդթնդում): Ծուղէր (կարմիր ծուղէք): Չուխի փէշերքը թելով, ծանով կապում են: Հարսդէի պէս կուփ կուփ վեր թռան (քնատեղերից): Ատնափոխ (մեր տեղն ա մէկ ոտնափոխ գերեզմանը:— Առձեռն բառարանում՝ ոտնափոխ լինիմ): Ատնակոխ անել (Առձ. բառ. ոտնակոխը՝ գոյական): Չափ քցել (ձին): Պնպնուն (կայ՝ պնպնան): Եարէն իրան իրան սկսում ա կամաց կամաց սղլթալ մրմնջալ ու ետոյ սաղանալ: Յրհնանք: Շատ անգամ հանաքըվեր խօսք էին գրում,— Եայլն Եայլն:

Այսպէս ուրեմն «Վէրք Հայաստանի» մէջ եղած բոլոր բառերը և մանաւանդ բոլոր դարձուածները չեն հաւաքուած «Բառ ու քանի» մէջ: Նոյնը կարող եմ ասել և Պոռչեանի «Կոռլաժաղիկի» համար, որից ես մի քանի երես միայն համեմատեցի և մի քանի բառեր պակաս գտայ: Մի անգամ որ այս ժողովածուն այսպէս թերի է, ապագայ ընդարձակ բառարանի տեսակէտից ուրեմն դա զրգրախտաբար քիչ պիտանի կը լինի. քանի որ պէտք է նորից այդ գրքերի մէջ եղած բառերն ու դարձուածները հաւաքել: Ես գոնէ կը գերադասէի, որ 180 գրքից բառեր Եայլն քաղելու փոխանակ՝ միայն թէկուզ մի տասը գրքից քաղուած լինէին բառերը Եայլն, բայց լիակատար ձևով, այդպէս մարդ «Բան ու Բառը» ձեռք առնելիս վստահ լինէր, որ այս ու այն գրքերի բոլոր բառերն ու դարձուածները կը գտնի մէջ: Բայց զգրախտաբար աշխատասիրողը

այսպէս չի մտածել, այլ ինչ որ ինքը կարեոր է համարել՝ այն է միայն առել. նա «անց ու դարձ անելը» կարեոր է տեսել, իսկ «բաց ու խուփ անելն» անկարեոր: Ուրիշ խօսքով նա ոչ թէ սխալ տեմատիկ կերպով է աշխատել իր ծանր գործի վերայ, այլ պատահականօրէն:

Օտարազգի բառերի համար ասուած է յառաջաբանում, թէ ասնուած են այն բառերը, որ անհրաժեշտօրէն գործ է ածում ժողովուրդը, չունենալով համազօր և համանիշ հայ բառ. օրինակ՝ բէր, չանաք և այլն: Այսպէս և այնպիսի բառերը, որոնք բարդուած են մի հայ բառի հետ, օրինակ՝ բաշաթափ, խամահանուկ, ծնկաչոր, ճնթոփ և այլն, թէ առաջին և թէ վերջին տեսակի բառերը շատ չեն: Աս մի որոշ ծրագիր է: Բայց այդ տեսակի բառերը շատ չեն ոչ այն պատճառով, որ դրանք չկան, այս դարձեալ այն պատճառով, որ աշխատասիրողը իր ծրագրի համեմատ չի վարուել և բոլորը չի բերել: Օրինակ նա բերում է իբրև այդպիսի դարձուածներ՝ բէյինը լիքը, բէյինը լցնել, բէյինը հաստ, բէյինը մտնել, բէյինը ընկնել, բէյինը տանել, — որ իբր անհրաժեշտօրէն գործ է ածում մեր ժողովուրդը, «չունենալով համազօր և համանիշ հայ բառ», մինչդեռ բէյին ուղեղ է նշանակում, և դրանով կազմուած դարձուածները նոյն ժողովուրդն աւելի շատ գլուխ բառով է գործ ածում: Բէյինը տանել. (=չատախօսութեամբ ձանձրացնել) — գլուխ տանել: Բէյինը հաստ (=բթամիտ), գլուխը հաստ, հաստապլուխ և այլն: Եւ եթէ դրանք և դրանց շատ նմանները մէջ պիտի բերուէին, ինչու օրինակ՝ մէջ չպիտի բերուէր՝ խաթր, մէկի խաթրը պահել, խաթրը կտորել և այլն, որից համանիշներն աւելի դժուար է գտնել, և կամ՝ հալալ հարամ և ուրիշ շատ բառեր և նրանցով կազմուած դարձուածներ՝ հարամ լինի, հալալ լինի և այլն: Եթէ մէջ պիտի բերուեն բէյուշ (=ուշաթափ ուշագնայ), բէշնորհր (=անշնորհք) միտել և այլն, ինչու չպիտի բերուէին՝ բէխարար, բզիլ, արեւսադախ, սուաղել, հինամամախ, դազաչափ և այլն, որ գտնում ենք «Վէրք Հայաստ.»-ի մէջ: Օտարազգի բառերի նկատմամբ ևս ուրեմն գտնում ենք մեծ թերութիւն. չի հետեւած առաջ դրած ծրագրին և շատ կարեոր օտարազգի բառեր և մինչև իսկ նրանցից կազմուած ու բարդուած հայերէն բառերը դուրս են թողնուած, մինչդեռ միւս կողմից այս ժողովածուի մէջ կը գտնենք ուսերէնից նոր մտած այսպիսի բառեր՝ ալոօշ (окрошка), խրեն (хребет) իբրև վաղարշապատում և Օշականում գործ ածուած բառեր: Բայց այդ տեղացիներն ուսերէնից նոր մտած շատ ուրիշ բառեր էլ են գործածում. . .

Դարձեալ մինչդեռ մի կողմից պակաս բառեր շատ կան, միւս կողմից այս ժողովածուն ծանրաբեռնուած է աւելորդ բառերով: Աշխատասիրողը գրում է. «Հայկազեան բառարանից շատ սակաւ

թուով առել ենք այն բառերը, որոնք խաղառ օրինակներ չունենին. օրինակ՝ լուսարար, և այն բառերը, որոնք միայն մի հատ օրինակ ունին և այն ևս յետին դարի. զօր. մրտիմ, ծառղարդար և այլն: Սա էլ մի որոշ ծրագիր է, զորերից օրինակներ շատացնել այս կամ այն յայտնի բառի համար: Այս ծրագրով հասկանալի է, որ սովորական բառերը դուրս պիտի մնային: Սակայն կան բառական թուով այնպիսի սովորական բառեր, որոնք թէ ինչու համար են մէջ բերուած դժուար է հասկանալ մանաւանդ այնպիսիները, որոնք լոկ բարբառների հնչաբանութեան համար նշանակութիւն ունեն, օրինակ տեղը=տայգը, անժած=անշարժ, կիր, կիրանալ=կոյր, կուրանալ, հո՞ւնց,=ոնց, հո՞ր=ուր, պրտող=պղտոր և այլն: Եթէ կիր մէջ է բերւում, այն ժամանակ նաև լիս (=լոյս), քիր (=քոյր), հէր, մէր և այլն նոյնպէս պիտի բերուեն. էլ չեմ ուզում խօսել շատ այնպիսի բառերի համար, որոնք տեղ չպիտի բռնէին այսպիսի մի ժողովածուի մէջ, քանի որ դրանք շատ սովորական բառեր են, ինչքան էլ Հայկազեան բառարանի մէջ օրինակներ քիչ կան կամ չկան դրանց համար: Կարելի էր անել մի քանի գիտողութիւններ ևս:

Այսպիսի մի գործի մէջ սխալ կամ անճիշտ բացատրութիւններն անխուսափելի են, ևս կարող էի մատնանիշ լինել մի քանի այդպիսի դէպքերի: Բայց կան դժբախտաբար և այնպիսի բառեր կամ դարձուածներ, որոնք չեն բացատրուած (ինչպէս տէրնդէդ, գլուխը քարը տալ և այլն): Դա ևս անխուսափելի է: Կարելի էր անել և մի քանի ձևական նկատողութիւններ, ինչպէս են կրկնութիւնները, օրինակ՝ նոսրն ընկնել, կայ թէ ճիտ բառի տակ և թէ ճտով. նոյնպէս մաքի հետ ընկնել կրթնած է՝ թէ միտք բառի տակ և թէ մաքի միտք և միտք և այլն: Դրանք աչքից փախած բաներ են և չեն վնասում գործին: Միայն մի բան չի կարելի ներելի համարել, այն որ մի կողմից երբեմն բոլորովին տարբեր բառերը, համանունները, իրրե մի բառ են դրուած, միւս կողմից նոյն բառերի տարբեր առումները յաճախ իրրե տարբեր բառեր են դրուած, վերջիններիս համար այստեղ օրինակ դնելը աւելորդ է, իսկ համանունների համար բերենք: «Կռել 1. հատանել կտրել... 2... ուժով մտցնել, լցնել»... առաջին նշանակութեամբ այդ բառը, որ գործ է ածում խոյնցոյց և սալմաստցոյց մէջ, նոյն կտրել բառն է, որ հնչիւնների յայտնի փոփոխութեամբ դառնում է կռել (ինչպէս և Պետրոս=Պիոս և այլն). իսկ երկրորդ նշանակութեամբ կռել միևնոյն դրարարի կռել բայն է, որ ծագում է կուռ բնից (որից և բաղադրուած է՝ խոտկուռ): Տես այսպիսի շփոթութիւնների համար նաև շմամ, չուր և այլն:

Եւ վերջապէս այսպիսի մի աշխատանքի մէջ, քանի որ յիշւում են թէ որ բառերը որ բարբառներում են գործ ածում և բերւում են հեղինակներից օրինակները, պէտք չէր դիմել «Սոխակ Հայաստան»

տանի» և «Լոյս» օրացոյցի նման ժողովածուներին կամ վկայութեան համար բաւականանալ միայն դրանց երեաները յիշելով. դրա հետեանքն եղել է այն, որ յայտնի հեղինակներից, Յովհ. Յովհաննիսեանից, Գամառ Քաթիպայից ու Պոօչեանից առնուած օրինակների համար այդպիսի ժողովածուներին է ցուցում լինում. գոնէ կողքին պէտք էր յիշել թէ որ հեղինակից է. օրինակ՝ արեղածաղ բառի համար բերուած է «Եկ արեղաձագ, թող արա ու արօտ. Ասիս. Հայ. 17.» մինչդեռ դա Գամառ Քաթիպայի տող է. նոյնպէս «Արագն եկաւ լափին տալով», «մի բան առա սրտայի» օրինակների համար (տես՝ լափ և սրտայի բառերի տակ) ցուցում է արած Սոխ. Հայ. մինչդեռ դրանք Յովհաննիսեանի տողերն են:

Կարելի էր մի շարք այսպիսի նկատողութիւններ էլ անել և ուղղագրութեան մասին խօսել առանձնապէս, բայց բաւականանում եմ այսքանովս, մի անգամ ևս չեշտելով այս աշխատանքի կարեւորութիւնն ու արժէքը:

Մ. Աբեղեան

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Չատիկ ճրագալոյց երեկոյեան այս անգամ ևս Վեհափառ Հայրապետը շնորհ էր արել միաբանութեան՝ ընթերցել հրաւիրելով: Նորին Սրբութիւնը բարեհաճեց ներկայ լինել ամբողջ ժամանակը, օրհնելով հայ ազգն ու առանձնապէս յիշատակելով Թիւրքիոյ հայութեան տառապանքները և մասնաւորապէս առաջարկելով Մայր Աթոռի միաբանութեան կենացն ու յորդոր կարգալով միահամուռ ոյժերով աջակցել իրեն կատարելու իւր սրբազան պարտականութիւնը դէպի ազգն ու եկեղեցին. Նորին Վեհափառութեան հաճելի եղաւ իւր օրհնութիւնները, յորդորն ու բաժակաճառն ամփոփել հետեւեալ բառերով. «Նիւի՛ Ամենայն Հայոց Հայրապետներն են հոգեւոր ղինութեան ընդհանուր հրամանատարները, Մայր Աթոռի միաբաններն են այն սպաները, առանց որոնց օգնութեան Հայրապետներն անկարող են լաւագոյն ծառայութիւն մատուցանել իրենց հօտին. կեցցէ Մայր Աթոռի միաբանութիւնը»: Նորին Սրբութեան այս խօսքը պատասխան էր Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի ճառի, որ ընթերցել սկզբին իրաւունք առնելով Հայրապետից միաբանութեան կողմից արտասանեց մօտաւորապէս հետեւեալը. «Վեհափառ Տէր, թոյլ տուէք, խնդրեմ, միաբան եղբարց և իմ կողմանէ որդեական ամենախորին ակնածութեամբ շնորհաւորել Ձերդ Օծութեան մեր Տէր Յիսուս Քրիստոսի ս. Յարութեան տօնի առթիւ և երկար կեանք, ոյժ և կարողութիւն մաղթել ի փառս ազգի և եկեղեցւոյ: Քաղցր է ինձ շնոր-